ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
թիվ 4

**«Գավառի պետական համալսարան» հիմնադրամի կարիքների համար համակարգչային, պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/10» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի.**

ք.Գավառ 22 նոյեմբերի 2017թ.

Սույն թվականի նոյեմբերի 22-ին ժամը 10.30-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում, տեղի ունեցավ համալսարանի կարիքների համար համակարգչային, պատճենահանման սարքավորումներ և օժանդակ նյութեր ձեռք բերելու նպատակով հայտարարված «ԳՊՀ-ԳՀԱՊՁԲ-17/10» ծածկագրով ընթացակարգի շրջանակում «ՍԵԳ» ՍՊԸ–ի և «Նորմա-պլյուս» ՍՊԸ-ի կողմից առաջարկվող ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի համապատասխանության գնահատման հանձնաժողովի նիստ:

Նիստին մասնակցում էին հաձնաժողովի բոլոր անդամները՝ հանձնաժողովի նախագահ Ա. Հ. Ապրոյանը, հաձնաժողովի անդամներ՝ Ն. Ա. Կուտուզյանը, Խ. Ժ. Սաֆարյանը, Լ. Գ. Սիրունյանը, Ս. Պ. Կարապետյանը:

Հանձնաժողովի քարտուղարը զեկուցեց ՀՀ ՊԵԿ-ի կողմից հայտերը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով մասնակիցների ժամկետանց պարտավորությունների բացակայության վերաբերյալ տեղեկատվության և համապատասխան չափաբաժիններով առաջին տեղ գրված՝ հաղթող մասնակիցների կողմից ապրանքների անվանումների և տեխնիկական բնութագրերի ներկայացման մասին:

Հանձնաժողովը գնահատեց, որ ապրանքների անվանումները և տեխնիկական բնութագրերը համապատասխանում են հրավերի պահանջներին, կազմվել և ներկայացվել է սահմանված կարգով: Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ և 34-րդ հոդվածի պահանջներով՝ հանձնաժողովը

**որոշեց՝**

- 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ և 21-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «ՍԵԳ» ՍՊԸ–ին:
- 7-րդ և 8-րդ չափաբաժիններով ընտրված մասնակից ճանաչել «Նորմա-պլյուս» ՍՊԸ–ին:
- Առաջարկել «ՍԵԳ» ՍՊԸ–ին և «Նորմա-պլյուս» ՍՊԸ–ին հաստատել պայմանագրերի նախագծերը և ներկայացնել պայմանագրերի ապահովում:

- Սույն արձանագրությունը և պայմանագրեր կնքելու մասին որոշումը սահմանված կարգով հրապարակել պաշտոնական տեղեկագրում:
- Անգործության ժամկետ սահմանել 5 օրացուցային օր:
- Հանձնաժողովի հաջորդ նիստը գումարել ընտրված մասնակցի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետներում ներկայացնելուց և անգործության ժամկետի ավարտին օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը, ժամը 14.00-ին «Գավառի պետական համալսարան» հիմնադրամում՝ ք. Գավառ, Հրանտ Հակոբյան 1 հասցեում:

| | |
|---|---|
| հանձնաժողովի նախագահ՝ | Ա. Հ. Ապրոյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Ն. Ա. Կուտուզյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Խ. Ժ. Սաֆարյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Լ. Գ. Սիրունյան |
| հանձնաժողովի անդամ՝ | Ս. Պ. Կարապետյան |
| հանձնաժողովի քարտուղար՝ | Ս. Բ. Ղարաբաղցյան |